

ՀԱՉԱԿ

ԱԶԳԵՐԻ ԵՂԻՍՅՐՈՒԹԻՒՆ.

Ազգերի եղբայրութեան մեծ գաղափարը երթալով չարունակ յաղթանակներ է տանում: Եւրոպական Արևմուտքի մեծ ազգերի մէջ եղբայրութեան գաղափարը արդէն խոր արմատներ է թողել: Ասում ենք խոր արմատներ է թողել ազգերի մէջ, բայց, բնականաբար, ո՛չ թէ կառավարութիւնների, պետութիւնների մէջ: Ա՛ւմ յայտնի չէ, թէ այդ կառավարութիւնները ինչպէս զինուորված են մինչև իրենց ակառները, նման միջնադարեան ասպետների, որ զրահաւորվում էին ու տիպ մինչև գլուխ: Ա՛ւմ յայտնի չէ թէ ինչ արհեստաւոր աչքով ու ընչաքաղցութեամբ, իրենց սեփական օգտի համար պատրաստ են նրանք ամեն մի վայր կեան միմեանց դէմ առաջ խաղացնել իրենց ձեռքի տակ գտնված միլիոնաւոր դժբաղդ ժողովուրդներին և դրանց անհամար դիակներից իրենց համար անմահութեան արձան կանգնեցնել, միմեանց «յաղթելով»: Արեւմտ, մեր եղբայրութեան խօսքը կառավարութիւնների մասին չէ: Բայց մեր խօսքը նմանապէս չէ վերաբերում եւրոպական բուրժուա, ունեւոր դասակարգին, որ միակ նեցուկն ու պաշտպանն է ներկայ յետագէմ, շահամուտ արհեստաւոր պետութիւնների, որ բոնք իրենց կողմից ներկայացուցին ու սրտաւանդ են միմիայն հարստահարիչ բուրժուա դասակարգի՝ ի վերջոյ ժողովրդային ահապին ընդհանրութեան: Այլ մենք խօսում ենք եւրոպական մեծ ազգերի հէնց այդ ահապին ընդհանրութեան մասին, որ գ ո Ր ծ աւ ո Ր, ա չ ի աւ ու աւ ո Ր պարզ անունն է կրում: Այդ միակ անունը բառական է, որ սարսուռ ազդէ թէ՛ պետութիւններին և թէ՛ գործաւորի կենսազին աշխատանքով հարուստ, զեղխ, անգործ ու անյազ կերպով կեանք վարող կեղեքիչ բուրժուա դասակարգին: Մենք խօսում ենք եւրոպական ազգերի գործաւորներին եղբայրական գալիքի մասին, որ հէնց այս րօպէիս Բէլգիայի մայրաքաղաքում իրենց պատգամաւորների միջոցով միմեանց

ձեռք են տալիս համերաշխութեան, սիրոյ և բնդհանուր զործակցութեան համար (Սօցիալիստական միջադպարն Կոնգրէս Բրիսէլում): Նրանք միմեանց ձեռք են սեղմում, միմեանց հետ սերտ կերպով կապվում են, կաղմելով Եւրոպայի ու Ամերիկայի գործաւորներին բաղկացած դեռ չը տեսնված հասարակական մի հակադասիւ մարմին ու զօրութիւն: Եւ այդ մարմինը կոչված է յեղափոխելու մարդկային ներկայ անարդար հանրակեցութիւնը, յեղափոխական պատերազմ մղելով ընդդէմ կեղեքիչ դասակարգերի ու կեղեքիչ պետութիւնների՝ յանուն հանրամարդկային շահերի, հանրամարդկային ազատ զարգացման ժողովուրդների շահերի թեւադրութեամբ: ազգային խտրութեան նախապաշարումը տեղ է տալիս ազգերի համերաշխութեան ու եղբայրութեան բարձր սկզբունքին: յանուն հանրամարդկային շահերի, որ բարձր են ազգային շահերից, թէ՛ որչափ մեծ ու հզօր է այդ սկզբունքը և որչափ ընդունակ իրականութիւն լինելու, բառական է միայն յիշիլ այստեղ գերմանացի ամենանշանաւոր սօցիալիստ ագիտատորներից մէկի՝ Բէյլստագի անդամ Բէլլի մի հռչակաւոր խօսքը, որ երեսփոխանական քրահումնա ուղղել է Բրիստոլին, 19 - որդ գարու խաւարի, բռնութեան՝ ու միլիտարիզմի այդ մեծ ու սոսկալի հանճարին: «Եթէ գերմանական կառավարութիւնը, — յայտարարել է Բէլլը, — պատերազմ մղէ Ֆրանսիայի դէմ, մենք, սօցիալիստներս, և մեղ հետ գերմանացի գործաւորները հանրամարդկային օգտի համար կարհամար հենք հայրենասիրական զառաջանքը և կերթանք նոյն իրեն Գերմանիայի դէմ»:

Մարդկութեան պատմութիւնը եկել հասել է այժմ մայն կէտին, որ այլ ևս չը կան անջատ ազգութիւններ, այլ կան կեղեքիչ կառավարութիւններ ու բուրժուա դասակարգ մի կողմից, որ փոքրամասնութիւն են կաղմում, և կան կեղեքված ժողովուրդներ, աշխատաւոր դասակարգ, միւս կողմից, որ մարդկութեան մեծամասնութիւնն է, նրա աննդատուն, նրա զոյու թեան յենակէտը, նրա զարգացման ջատագովն է: Եթէ

սերկան առաջիններին է պատկանում, ապագան վերջիններինը կը լինի, ամբողջ մարդկությունը կը լինի

Մինչդեռ հերոսական Արևմուտքում սպառնական կերպարանքով յայտնվում է ազգերի եղբայրության այդ վսեմ երևույթը. մինչդեռ Արևմուտքում սոցիալիստական միտքը դարձած ժողովրդների առաջնորդ, աշխարհիս գլխին որոտացնում է բոլոր մարդերի և բոլոր ազգերի եղբայրության մեծ սկզբունքը և ամփոփում այդ սկզբունքը իրականության սահմանում. մինչդեռ Արևմուտքի մեծ ազգերը բնական պրոպեդի, իրերի ընթացքի չորհուրդ ձգտում են ի մի ձուլվել իրեն մարդկային մի ցեղ ու մի գերդաստան՝ իրաւունքի, պահանջի ու զոյութեան համահաստատութեան նպատակով. — մէկ ուրիշ տեղ, խաւար ու ճնշված Արևելքում, բռնութեան տակ խեղդվող մանր ազգերը նոյնպէս ձգտում են միանալ և միասին մտածել իրենց ընդհանուր ճակատագրի մասին՝ նոյնպէս յանուն ժողովրդային շահերի և հանրամարդկային սկզբունքների։ Նրանք միմեանց ձեռք են մեկնում, նրանք միմեանց եղբայր են կոչում նոյն խի իրերի զրութեան զօրութեամբ։ Ազգայնական այլանդակ ու հրէշաւոր ատելութիւնը, մեծամոտեթիւնը, հակակրանքը չքանում են, տեղ տալով համերաշխութեան, ընդհանուր գործակցութեան։ իրենց ընդհանուր շահերը նրանց բերում ու միացնում են մի և նոյն աստարեղջի վրայ, մի և նոյն թշնամու դէմ, կեանքի մի և նոյն հանգամանքներում։ Պատմութեան ու իրերի տրամաբանութիւնը սկսում է ի մի ձուլել այդ զանազան ազգերի առաջադէմ, կենդանի ու առողջ տարրերին, այդպիսով նրանց կեանքում բռնալով պատմական մի նոր շրջան, որ մօտեցնում է նրանց տեղի առաջադիմած ազգերի վիճակին, առաջ բերում նրանց հանդէպ հանրամարդկային պահանջներն ու սկզբունքները և գնում նրանց մարդկային զարգացման ճշմարիտ չափի վրայ։

Հնչակի ընթերցողներն արդէն գուշակում են, թէ ինչի մասին է մեր խօսքը։ Յուլիս Տառնհէնզի տաւրեղարձի առթով մենք ամենքս մի նշանաւոր գէպի ականատես եղանք։ Հնչակեան Կոստակցութեան Աթէնքի Մասնաճիւղի նախաձեռնութեամբ բազմամարդ ու փառաւոր հանդէսով տօնվեցաւ Գում Գալիուի շարժման տարեդարձը։ Բայց այդ հանդէսը միմիայն հանդէս չէր, որ տօնում էին նոյն իրենք հայերը։ Գաւրիէլի քաղաքակրթված մանր ազգերի եղբայրութեան դաշինքի հանդէս էր Հայկական յեղափոխական մի մեծ շարժման տօնախմբութեան առթով։ Յոյն, Կրետացի, Մակեդոնացի, Ալբանացի, Եպիւրացի ու Յոյն Փոքր Ասիական մեր այդ բոլոր եղբայրները

մեր իրենց մեկնած եղբայրական ձեռքը սեղմեցին։ Հընչակաւոր «Արևելեան Դաշնակցութիւնը», որի նպատակն է բոլոր արևելեան ճնշված ազգերի ազատումը, սիրայօժար ու հաւանքուն կերպով մասնակցելով հանդէսին, իր եղբայրական դրօշի տակ ժողոված ունէր այդ թշուառ ու հալածված եղբայրներին, որոնց միակ յանցանքն այն է, որ նրանք մարդ են և ունեն պահանջ մարդկային կատարեալ զարգացման ու բարօրութեան նոյնպէս, որպէս իրենց եղբայր եւրոպական մեծ ազգերը։

Յիպոփոխական միջազգային համերաշխութեան այդ մեծ ցոյցը, որպէս արդէն սպասելի էր, մեծ իրար անցման մէջ զցեց սուլթանին ու Բ. Գաւան, որ հելլեն կառավարութեան հեռագիրներ ուղղելով ու գեղապանական զիմումներ անելով ամեն ճիգ գործ դրին արգելելու այդ ցոյցը, բայց ի վերջի կողմից հելլեն կառավարութեան ջանքերը, որպէս նաեւ աւստրիական ու անգլիական գեապանների զիմումներն արգելման նպատակով նոյնպէս ապարդիւն անցան։ Եղբայրացած ժողովրդների կամքը՝ «Արևելեան Դաշնակցութեան» հովանաւորութեան տակ՝ յաղթող հանդիսացաւ միացած կառավարութիւնների կամքի ու հրամանների առջին։ Արևելեան մանր ազգերի եղբայրութեան ըսկզբունքը, որ քանիցս մենք ջատագոված ենք նոյն այս սիւնակներում, այդպիսով մի նշանաւոր յաղթանակ տարեց։ Այսուհետեւ այդ եղբայրութիւնը կը հանդիսանայ իրրեւ մէկ անհերքելի իրողութիւն, որ եղբայրացած ազգերին տալիս է մի մեծ զօրութիւն իրենց ընդհանուր թշնամու դէմ։ Ընդհանուր շահեր, ընդհանուր ձգտումներ ու հանրամարդկային բարձր սկզբունքներ առաջ նորդ կը յայտնվեն այդ եղբայրացած ազգերին և կտան նրանց այն բարոյական անսպառ ոյժը, որ չը գիտէ ընկճվել և այն յիպոփոխական զօրութիւնը, որ գիտէ յաղթել։ Ստրուկները բռնակալի դէմ, ազատութիւնը բռնութեան դէմ, բարօրութիւնը թշուառութեան դէմ՝ հիմնված բոլոր ազգերի եղբայրութեան ու համերաշխութեան վրայ — ահա՛ այդ ժողովրդների եղբայրութեան խորհուրդը, որ Արևելքում ընդհանրապէս եղաւիլ փառտ է և մասնաւորապէս հայերիս մէջ մի նշանաւոր ու պատմական գէպը։ Ճնշված ազգերի եղբայրութիւնը և նրանց ընդհանուր ապստամբութիւնն ամեն տեսակ բռնութեան դէմ՝ մի վսեմ, մի սուրբ գործ է և այդ ազգերի միահամուռ ու համերաշխ յիպոփոխական գործունէութիւնը միայն կարող է նրանց վերկել ստրկութիւնից և տալ նրանց միջոցներ հասնելու իրենց մարդկային կատարեալ զարգացման, ազատութեան ու բարօրութեան։

Թ Ղ Թ Ա Կ Յ Ո Ի Թ Ի Ի Ն Ն Ե Ր

ՆԱԽԱԿ ԹԻՐՔՍՅ ՀԱՅՍՍՏԱՆԻՅ .

Սերաստիա, 10 յուլիս 1891 .

Գաւառիս ներքին կողմերէն ծանր լուրեր կը հասնին Քաղաքիս արեւելեան կողմը Գոշկերի գաւառակին մէջ իւր առաջատակներով և առեւանգութիւններովը համբաւաւոր զաշախ - Ահմէտ աւազակն վերջերս անհետ կըլլայ նոյն կողմերէն Նոյն գաւառակին մէջ Աւաքլիսէ գիւղի բէյիսն Զատիկ իբրեւ գիտակ Ահմէտի անհետաց ման՝ տաճիկ զիւղացիներու կողմէ գաւառագլուխն եղող Զառա աւանի կառավարութեան առջև կամբաստանութիւն Զառայի գայմագամին Մէհմէտի պէյ և կառավարութեան պաշտօնեայ Ըսախ պէյ, յիշեալ Ահմէտի ձեռնառններն ու պաշտպաններ և որք յաճախ իրենց մէջ կը բաժնէին անոր աւարները, անմիջապէս զինեալ տասնեակ ոստիկաններով և տաճիկ սրիկայից խումբով մը զիշեալն Աւաքլիսէ կերթան, և կը պաշարեն Զատիկ բէյիսի տունը, երբ Զատիկ կը մերժէ բանալ իր դուռը իբրեւ տարածամ եկվորներ, զայմագամն կը հրամայէ յարձակում ընել Պատուհաններէն բաւական հրաղէշներ պարսկելով զանիւրը կը կտորեն և կը խուժեն ներս, և Զատիկը՝ որ նոյն պահուն վիրաւոր ինկած կը գտնեն, ինչպէս նաև անոր որդիքը, եղբայրները, զաւակներով արնոյ կապելով և գանահարելով կը ձգեն ախոս մը, իսկ Զատիկի կինն, աղջիկներն ու հարսները նոյն գիշեր կը մնան զոհ ու բաժին վայրենի գայմագամին, Ըսախ պէյին և զապթիէից վայրագ կրից ու կեղտոտութեանցը, Այդպէս այդ վայրենիք կը բռնաբարեն ու կը լլկեն անոնց կուսական համեստութիւնն ու ընտանեկան անաղարտ պատիւն Գայմագամն ու Ըսախ պէյ, հետեւեալ առաւօտուն իրենց հրոսակ խումբերով Զատիկը, նորա որդիքը ու հարսները իբրեւ կարծեցեալ ոճրին մասնակից՝ կապեալ կիջեցունեն Զառա ուր կը բանտարկուին, իսկ կինն, հարսն ու աղջիկներ՝ գայմագամին ու Ըսախ պէյին տուն կը մնան իբրեւ բանտարկեալ (. . .) : Հակառակ եղած ասբաստանութեանց Զատիկի տունն ևս խուզարկելով ոչինչ կը գտնուի հաստատող կարծեցեալ ոճրոյն Ըսախ պէյ ընիկ Զառայի, իբրեւ կառավարական պաշտօնեայ, միւսնոյն ժամանակ սրիկայ աւազակապետ նշանաւոր Զառայի և չրջակայից մէջ, արդէն իր գիրք ամենալաւ ձեռնառն միջոց մ' է անպատկառ, շատ անգամ ալ անձամբ ընկերա նալով աւազակ խումբերու հետ, ասպատակել ու առեւանգել հայ գիւղերու կիներ, աղջիկներ, հօտեր, ինչք ու ոտապուածք և այլն և այլն Բաղմաթիւ հանրագրեր, ոչ միայն հայք, այլ և քուրք զիւղացիներէ պատրաստեալ տեղացած են ի Սերաստիա կուսակալին, սակայն անդոր մնացած են զորք իրենց ձայնն լսելի ընել տալու և այդ մարդակերս ձիւաղ անպատիժ մնացած կը շարունակէ իր գործը :

Գարձեալ Գոշկերի գաւառակին մէջ քիւրդերու ցե

ղապետ Ալիւան պէյի որդի Մուստաֆա պէյ, որ ապրստամբական զիւրք մը բռնած էր, արդ վերջերս քիւրդ ցեղապետներու և ցեղերու հետ սա ևս հնազանդութիւն ցոյց տալով իր ցեղերէն հեծելազունդ մը կաղմելու խօսք կրնէ : Այժմ այդ վայրենի ցեղեր աւելի չիւսացեալ և քաջաբնուած իրենց ցեղապետներու, սուլթանի և տէրութեան կողմէ վայելած շտայլեալ թրքական պատիւներէն, ընդունելութիւններէն ու արտօնութիւններէն, աւելի անպատկառ ու համարձակօրէն ի գործ կը դնեն իրենց նողկալի արհեստը, ասպատակելով և գրաւելով չրջակայ հայ գիւղացւոց հօտերն, հօտեր, նախիրներ ու հօտաղ :

Այդ քիւրդերէն Սանտալի Ալիւիս, Այափուսիցի Ալի և Ալիւան պէյի ծառայներէն Պաօ մի ամիս յառաջ 40 . 50 զինեալ ձիւորներով Զառայի նշանաւոր աղջայրներէն Հարիկեան Արապետ և Արթին ազաներու ի Պէյ . Տաղի ունեցած 1200 ոսկւոյ արժողութեամբ ազարակին վրայ կը յարձակին զիշեալն և ազարակին ախոտաւոր և այլ շէնքերը հրդեհելով կը քանդեն և հոն գտնուած ոչխարներն նախիրներն ու չորքոտանիները իբր ատար կը տանին, և ազարակին սեփական արտերն ու հողերը իւրացնելով ու զրաւելով միւսնոյն ժամանակ բոլոր կանաչ գետաբոյս ցանքերը կը վճայեն իրենց ձիւորուն, հօտերուն արածեցնելով և կոխկրտել տալով : Արապետ ազան ու մշակները մաղապուր կրակի և սուրի միջից կաղաւթին : Յիշեալ ազան կուզայ քաղաքս և կը զիմէ բողբոջորով մը կառավարութեան և քսան օրէ տակի է որ խեղճը կը զեգերի աստ, առանց երբէք իր բողբոջն ու գատին նայուելու :

Այնուազ զայրոյթ և յուզում պատճառած է տեղւոյս ժողովրդեան մէջ թրքական վայրագութեան արգասիք և զոյգ հետեւեալ եղեռնական զէպքը : Անցեալ չաբաթ 70 տարեկան հայ ծեր կին մը իր որդւոյն հարսին ու 12 տարեկան աղջիկ թոռան հետ միասին քաղաքէս երկու ժամ խոնրիկ տոր վանքը ճամբայ կիյնան յախտ և երկրպագութիւն ճամբու միջոցին ձիախտի դէտեր և մի զարթիլէ հանդիպելով տունց հրաղէշներու, սուրի սպանալեաց տակ, յիշեալ երեք եղկելներու պատիւն կը բռնաբարեն, ի տես իրենց անաղարտ պատուոյն սոյն գունակ արատաւորման և բռնաբարման, մանկամարդ հարսն անձ նասպանութեան կը զիմէ և օրիորդն խեղազարուած է . . .

Կոշիակ Սերաստիոյ .

ՆԱԽԱԿ ԿԻԼԻԿԻՍՏԻՅ .

Հայկական ընդհանուր խլրտման առաջնն առնելու համար թուրք կառավարութեան այժմեան ձեռք առած խորամանկ միջոցներէն մին ալ սա է, սոյսինքն՝ Տաճկաստանի մէջ գտնուած բոլոր հայ տարրը բրբրել մաղել և քիչ շատ բանգէտ, աշաւուրջ և ազատական ձգտում ունեցողները, ինչ կարգի ալ պատկանին, այլ և այլ պատրուակաւ իբր խռովարարաց խմբի պատկանող տպաւորմբ, բռնել բանտարկել, արսորել և անոնք հետքերը բնիկն ու

ընկերու ջանալ է: Այդ խորամանկ միջոցին բաւական մեծ զոհ տուին, Կիլիկիոյ բաղաձայն բաղաբներէն Հաճըն, Զէյթուն, Մարաշ, Չորք - մարզումն և այլ քաղաքներ ու գիւղեր:

Հաճընոյ խաղաղ ու հանդարտիկ ժողովուրդը սլահ մը ի դուր մտածելով թէ կարող կը լինի խաղաղ միջոցնէ լող զարգանալ յառաջագիմնը, այդ մտածմամբ Հաճընոյ երիտասարդութիւնը կազմած էր Ուսումնասիրաց ընկե թութիւն մը՝ որուն նպատակն էր ընթերցասիրութիւն տա րածել ժողովրդեան մէջ և օգնել որք ու ազգատ ուսա նողաց: Այդ ընկերութիւնն աւելի բարոյական այժ ունէր, քան թէ նիւթական, այնպէս որ նա բաւական մեծ թը լով անդամներ ունէր, այլ և այլ քաղաքներ զանազան գրադումներով, ոմանք՝ դասատու, ոմանք՝ պաշտօնեայ և ոմանք՝ Կ - Պօլիս պետական վարժարանի աշակերտներ էին: Վերջին շարժմանց ասթիւ կառավարութիւնը ինչ ինչ կատակներով ինչպէս ուրիշ կարիսը անձնաւորութիւններն, նոյնպէս այդ ընկերութեան զխառնը անդամ ները ձերբակալեց և երկար ժամանակ Հաճընոյ, Սայ, Ատանայի բանտերուն մէջ փակեցնելէ վերջ՝ Մեղքոն էֆ. Մանուկեանը, Թորէն գասատու Միաց. ընկե թութեան Տարսնի վարժարանին (նախկին Թորէն գա սատու Հաճընոյ) 5 տարի, Մինաս էֆէնտի թուր սարգիսեան, Յովսէֆ էֆէնտի Նաւայանտեան (երկուքն ալ Հաճընոյ աղգ. վարժարանաց ուսուցիչք) և Պարեգիսեան Գ. վարդապետ Աթաէրեան երեքական տարի. Մարտիրոս էֆէնտի Սէքսան և ան փաստարան, Հաճընի Տիգրան էֆէնտի թուր սարգիսեան՝ նուֆուսի պաշտօնեայ ի Մէրսին, Պա լուսա Շըխըրաւմեան՝ մուսալիքի գաստարանին Հա ճընոյ՝ մէկու կէսական տարի. Փանոս Մախեան հիւան, Միհրան Պալեան՝ գասատու Էօղէրլի գիւղի ի փայտ, Պարիզոր թուրսարգիսեան՝ մուսալիքի գործ, Եփրեմ թուրսարգիսեան՝ խանութպան, Պետրոս Պոյումճեան, Կարապետ Պուրճա գեան և Համարճում Պարախեան՝ մէկական տարի բանտարկութեան գատապարտեց, իսկ Յովհան նէս և Մինաս էֆէնտի Պահատրեաններն, Յարութիւն էֆէնտի Շըխըրաւմեան, Յարութիւն էֆէնտի թէրզեան և Յակոբ աղա Պըրգե և աշարեանը ազատ թողուց:

Հաճընոյ գատարանը նաև գատապարտեց ի բացա կայութեան Հաճընոյ աղգ. վարժարանի գատատուներէն Ժիրայրը տասն և հինգ տարի և նորա եղբայրը Համ րարճում Պոյումճեանը 10 տարի բերդարգելութեան: Նոյնպէս Հաճընոյ պարզ ու հասարակ դասէն թէ՛ այր և թէ՛ կին, մասնակցած էին Սիրոյ ընկերութիւն անունով ժողովրդային ընկերութեան մը, որ տարածուած էր Զէյթունի, Հաճընոյ, Մարաշի, Կիլիկիոյ այլ և այլ քաղաքաց ու գիւղերէն մէջ և որոյ նպատակն էր տա րածել թէ՛ ճշմարիտ խաղաղութիւնը հաւատքով յայտն ու սիրով կարելի կը լինի ձեռք ձգել և թէ հարկաւոր էր հայրենակցաց մէջ եղբայրութիւն ու համերաշխութիւն:

Այս ընկերութեան անդամակցողք ծոխալահութեամբ, ա պաշխարութեամբ կաղթէին, կերպէին, միով բանիւ ճըզ նաւորական կեանք մը կանցունէին, այնպէս որ թուրք կառավարութիւնը ուշադրութիւն անդամ դարձուցած չէր ատենց վրայ: Ասկայն պատր ջուրին մէջ ձուկ որսացող հայերուն ու կղերականներուն թիւադրութեամբը, թուրք կառավարութիւնը հետզհետէ սկսաւ աւելի կատկածանօր դիտել, նոյն իսկ այդ ընկերութեան անդամները՝ որք ա լետարանէ և աւետարանական գրութեանքէ իզատ ու րիչ սչինչ չէին պահէր իրենց մօտ: Կառավարութիւնը նոյնպէս ձերբակալած էր նոյն զխառններէն հինգ հոգի, որոց մէջ կը գտնուէր նաև Հաճընի գետտի կին մը, Թիկին Սաւա Պըթըֆեան, գուստը թուր սարգիսեան Սարգիս աղայի և վերոյիշեալ Մի նաս, Եփրեմ և Պարիզոր թուրսարգիսեաններն: Հօրեղբոր աղջկը՝ Յիւնալ Սիրոյ ընկե թութեան զխառններն երկար ժամանակ բանտերուն մէջ տաժանելի շտրշտանաց տակ պահելէ վերջ՝ երեքա կան տարի բերդարգելութեամբ աքսորեց յԱքհա, ուր ցարդ կը մնան և ընդ որս յիւնալ Թիկինը ու իր նորա ծինը, զոր ծնաւ Ատանայի բանտին մէջ:

Հաճընոյ բանտարկեալներէն այն մասը՝ որք բանտէն խոյս տուած են, գէթ տաւ այժմ ազատ են պատմուելէ և երանի թէ օր մը լինէին բոլորովին ազատ:

Ստիտիկ .

ԳՈՒՔ ԿԸ ԾԻԾԱՂԻՔԻ ԲԱՅՅ ԻՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ Է .

Յուլիս Տասնէհինգի տարեգարծի հանդէսին Աթէնքի մէջ փառաւոր կերպով տօնուելուն յաջորդ օրը՝ Հալեթի օսմանեան հիւպատոսարանը լսելով որ հայերը հայկա կան գրօջակով հանդիսաւոր թափալ կաղմեր են հիւլեն մայրաքաղաքին մէջ, այդ հակաթուրքական ցոյցին տալաւ րութիւնը նուաղեցնելու համար հետեւեալ միջոցը կը ժառերէ, միջոց՝ զոր տաճկական փառած և ծթուած խելքերը միայն կրնան խորհիլ ծիծաղ պատճառելու հա մար ուրիշներուն: Հալեթի հիւպատոսարանի առաջին թարգմանը՝ Մէհմէտ պէյ անուն՝ կը վաղէ փողոցները, քաղաքին մէջ բանող բանի չափ Մէլի հայերը կերթայ կը գտնայ և անոնց կըսէ, "Աթէնքի հայերը հայկական գրօջակը պատգուցեր են և անկցի թուրքիա պոտացեր են, մենք ալ հոս տաճկական գրօջակը պարզենք և դուք ևկէք " կեցցէ վեհափառ սուլթան " պուտացէք, ձեզի 506 ֆրանկ պակշիլ կուտամ " Աւելորդ է ըսել թէ մեր կարծի հայեր " զորս դու պատուիրեցեր " կը նախատեն զինք և իր փառաւորիլ ուղած բանակալ սուլթանը և խոյտաւակ կերպով հիւպատոսարան կը վերադարձնեն: Թուրք կառավարութիւնը որ իր երկրին մէջ ամենատար և ամենախոյտաւակ միջոցներու կը գիժէ չողբորթական յայտարարութիւններ խլելու համար ժողովրդէն, չամա չէր եւրօպական երկիրներու մէջ ևս նոյն շտոր միջոցն:

բու գիմել բայց լաւ է, կը խայտառակուի և ծիծաղ կը պատճառէ :

Ապտակ .

ՆՍՄՍԿ ԹԻԻՐՔԻԱԿՅ .

Կ . Պօլիս, 3 օգոստոս 1891 .

Խորամանկութիւն և բռնութիւն — ահա՛ այն երկու միջոցները, որով այս վայրկենիս թիւք կառավարութիւնը կաշխատի լուծել հայկական խնդիրը: Սակայն կարծես թէ ո՛չ մի ժամանակ խաբէութիւնը, նենգութիւնը այնքան զարծածական չէ եղել կառավարութեան, որքան ներկայ պարագային մէջ հանգէպ հայ ժողովրդեան: Եթէ այդ կարծիքը չափազանցած չէ, նոյնքան և չափազանց թող չը համարուի յայտնել թէ թիւք վարչութեան մէջ շատ հազուադէպ եղած է վերին աստիճան խարդախ, կեղծ, անբարոյական մէկ անձնաւորութիւն, որպիսին է ոստի կանութեան այժմեան նախարար Նազըմ ալէյը: Տակաւին երիտասարդ, փառասէր, չափամուլ համարձակ, գործունեաց, միւս կողմանէ տգէտ, նենգ, խարբեայ, քծնող, չորքորդ, բռնակալական ոգւոյ տէր — ահա՛ այն անձնաւորութիւնը, որուն յանձնուած է տէրութեան բարեկարգութեան պահպանումը: Արդի կնճառտ պարագայից մէջ սուլ թանին հարկաւոր էր մի այդպիսի պաշտօնէի ծառայութիւնը և այս բոլորիս Նազըմ ալէյ իր գործունէութեան համար ամեն պաշտօնեայէ աւելի սուլթանի շնորհաց մէջ է:

Նազըմ ալէյի idée fixe է եղած հայկական յեղափոխական գործի իսպառ բնաջինջ անկը: Այդ նպատակին հասնելու համար նա գործ գրած է բիրտ ոյժ և խորամանկութիւն, ինքվիդիցիաի չարչարանքներ և կեղծատրուութիւն: Փօլիսներէ մի ահագին երամակ, յայտնի ու անյայտ լրտեսներէ մէկ ամբողջ լէգէօն, որոնք մեծաւ մասամբ կամ ղէնէկադ կամ քաղցած և կամ վատաճողի հայեր են, կը ծառայեն իր հրամանաց ներքե և կը կազմեն իր գլխաւոր ոյժը: Շարժելով այդ անպիտան բանակը իր գաղտնի դիտմանց համեմատ, նա մի կողմէ կը բազմեցնէ պատրիարքը և ազգ . ժողովը, միւս կողմէ՝ կը ձգտի ժողովրդեան խաւերուն մէջ թագնուած յեղափոխական ոյժերի ի՛բր թէ « վերջին մնացորդները » (. . .) ձեռք անցնել և միանգամ ընդ միշտ վերջ տալ կառավարութեան հանդիստը խռովող նոյն իսկ ամենամանր ցոյցերը:

Այդ քաղաքականութեան արդատիքն են այն մի քանի « ազգային » անցքերը, որ անցեալ ամսոյ մէջ տեղի ունեցան մայրաքաղաքիս մէջ: Արդէն յայտնի է Սուրէնեան Պէնկլեան վարձկան խմբակի գոյութիւնը, որ կազմուած է յատկապէս Ալքեանը տապալելու և Բարթուղիմէոսը նստեցնելու նպատակաւ: Իր ժամանակին մեր նախորդ նամակներէն մէկի մէջ արդէն յիշատակած ենք այդ զործերի մանրամասնութիւնը և շարժառիթները, որոց վրայ այս անգամ հարկ կը համարենք կանգ առնել:

Ներկայառկութիւններ սերմանել հայոց ազգային ամեն

մարմիններու մէջ — Նազըմի այժմեան նպատակն է: Թէ և չգորանով նա կը կարծէ հայոց յեղափոխական ոյժերը չլատել սակայն այդ ոյժերը ազգային ժողովներու մէջ է ամենեւին, որ կը գտնուին, բայց նա կուտայ դուրանով այլ փեսաներ: Նա գործիք կը փնտռէ և կը գտնէ: Հմուտ ձկնորսի ուռկանի մէջ ձուկը կիյնայ և այդ ձուկը կը յայտնուի Սուրէնեանը ազգ . ժողովոյ մէջ և մատնիչ . գաւաճան վարդապետ Պէնկլեանը ազգ . ժողովէն դուրս: Արժանաւոր անձնաւորութիւններ:

Կըսուի թէ Սուրէնեան անձնական հաշիւներ ունի Ալքեանի հետ, իսկ վատաճողի Պէնկլեան կը կարծէ թէ ներկայ պատրիարքը ձգել տալէ յետոյ, Բարթուղիմէոսի ձեռքով վերստին պիտի կտրենայ վարդապետի անպատուած վեղարը գլուխն անցնել և ինքն իրեն անպարտ երեցնել ժողովրդեան: Այս խմբակի վերջերս Նազըմ ալէյի յատկապէս համաձայն այն աստիճան առաջ գնաց, որ մինչև իսկ առանձին ծանուցագրով մինչև սուլթանի ահանջը հասցուց պատրիարքարանի կողմանէ վերջին ընտրութեանց միջոցին « զիտմամբ գործադրուած զեղծումներ »: Այս քայլ անհետեանք չը մնաց: Ազգ . ժողովը գումարուեցաւ առաջին անգամ միայն նախկին երեսփոխաններով . Բ . Դանէն եկած յատուկ հրամանի համեմատ: Սակայն Սուրէնեան Պէնկլեանի այս վարմունքը զայրոյթ յառաջ բերաւ պատրիարքարանի մէջ և ահա երկրորդ նստին քաղաքական ժողովը յատուկ պաշտօնագրով երեսփոխանութեան ներկայացուց Սուրէնեանի արարքը՝ իրբ և խարդախ արարք, որոյ նպատակն էր պատրիարքը, վարչութիւնը և ամբողջ ազգ . ժողովը անվտանգելի ցուցնել սուլթանի առաջ: Քաղաքական ժողովը իր պաշտօնագրի մէջ կը յայտնէ թէ Սուրէնեանի արարքը յատկապէս քննած և հաստատուած է: Մեծ գայթակղութիւն և խայտառակութիւն ժողովի մէջ: Սուրէնեան սուտ կը հռչակէ վարչութեան ցուցմունքը և խաբէրայ բոլոր ժողովականները, և ահա մեծ իրարանցում: շփոթութիւն « պատկառելի » երեսփոխանաց մէջ, որք միաբերան « դուրս, դուրս » կազուղակէին գատապարտեղոյն: Միծաղելի և տղայական տեսարան կը պարզուի պատկառելի ժողովականներու պատկառելի սրահի մէջ: Վսեմափայլները, մեծաւորները, էֆէնտիները իրարու կիյնան. վսեմափայլ Աւնեանը չը կրնար ղսպել իր վսեմափայլութեան ասիական կրքերը և էֆէնտի Սուրէնեանի թեւէն բռնելով իր վսեմափայլ ձեռքով կուռիի հարուածներու տակ կը հրէ՛ դուրս նե տեղու համար: Եւ այնուհետեւ համողը . համողի ետեւէն կուռիներու հարուածներ կը տեղան Սուրէնեանի գլխուն: Բարապաններ կը կանչուին և դուրս կը վռնտեն հայոց էֆէնտի երեսփոխանը: Այդ ժամանակ հայոց ազգային պատկառելի ժողովը կը նմանէր շուկայի կուռի բռնուած անմոխի մը: Կերեար, որ մեր ծանրաբարոյ երեսփոխանը շուկայի ամբոխէն ո՛չ պակաս վարժ են ծեծելու և ծեծկուելու: Սուրէնեան վերջապէս դուրս կը շարտուի. պատրիարք կը վախճի: Սրահի մէջ բարձրացած փոշին կը մոնէր այդ պատկառելիներու կոկորդային խողովակները և հազը, ընդմիջուելով խապտո հայհոյանքներով:

Սուրենյանին, կսկսի խեղդել նոցա: Հազը Սուրենյանի վրէժը կարծես ամեն կողմէր... Վերջապէս ամեն բան կը հանդարտի և մեր պատկառելիները կրկին կը նստեն իրենց տեղերը՝ ազգային գործերի կարգադրութիւնները չարունակելու համար: Ինչ հրճուանք կը գայ հայ սիրտ մը, երբ կը տեսնէ նոցա այդ պարտաճանաչութեան ըզգացումը, որ սակայն արգելք չէր «ազգի շահին» համար մի րօպէ առաջ ձեռնել իրենց էֆէնտի պաշտօնակից ներէն մին:...

Սուրենյանի արտաքսման և ազգային պաշտօններէ իս պառ դադարեցումն բանաձեւ քուէի գրուելով միա ձայնութեամբ կընդունուի Պատրիարքը, որ գայթակշռութեան պահուն փախուստ տուած էր, կը դառնայ ժողովասրահ և ցաւ կը յայտնէ պատահածի նկատմամբ, իսկ Նուրեան էֆ. առիթէն օգուտ քաղելով իրբ համարձակութեամբ անմիջապէս երախտագիտական և շնորհակալութեան կարճ ուղղործ մը կարտասանէ առ «օգոստոսիա վեհապետը»... ներկայք երկիւղածութեամբ ունկնդիր լի նեղէ յետոյ՝ միահամուռ «կեցցէ՛ վեհ. սուլթան» բառերը կը թնդացնեն...:

Ահա Նսաղը՝ պէյի քաղաքականութեան արդիւնքը: Ազգային մարմիններու կեղտոտ պառակտումներով զբաղեցընել ժողովուրդը, առիթներ ստեղծել սուլթանին հաւատարմութեամբ ծառայելու և հպատակելու սրտագին յայտարարութիւններ կորզելու համար, մտքերը զրաղեցնելով՝ ժամանակ շահել, սուլթանի աչքին իր պաշտօնավարութիւնն անհրաժեշտ և իր անձը կարեւոր երեցնել, հայ ժողովուրդն անբարոյականացնել չնչին անձնական ուղղունքի էնթրիկներով: Այլապէս նորա համար միևնոյն է, թէ պատրիարքը Ազգեան է եղել կամ Բարթուղիմէոսը, բաւական է որ պատրիարքը ով ալ լինի, կառավարութեան մարզը, նորա գործիքը լինի... Եւ այսօր Պօլսոյ մէջ Նսաղը՝ պէյ ինքն է սուլթան և ո՛չ սուլթանը: Ահա թէ ուր եւք այժմ...:

Դիտակ.

ԱԶԳԱՅԻՆ ԺՈՂՈՎ ԵՒ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹԻՒՆ.

Յունիս ամսուան դէպքերէն մէկը ազգային ընդհանուր երեսփոխանական ժողովոյ վերաբացումն էր, որ տեղի ունեցաւ 14 ին, ուրբաթ օր:

Յայտնի է որ ներկայ ազգ. ժողովը մի ամիս ժամանակով դադարեցած էր իր նիստերը կաթողիկոսի մահուան առթիւ: Այդ ժամանակամիջոցին մէջ՝ պատրիարքարանը և վարչութիւնը զբաղուած էին ընտրութեանց խնդրով, զոր փութոյ պնդութեամբ յառաջ կը տանէին, ըստ սրում միճակաւ դադարեալ, որ ամեն երկու տարի կը պատահէ ըստ օրինի, մահուան պատահականութեամբ, անաւանդ այլ և այլ նկատումներու զօրութեամբ պա. կասած անգամներուն տեղերը հարկաւոր էր լինել: Եւ որովհետեւ վերոյիշեալ պատճառներու գոյութեամբ պա.

կասած երեսփոխանները գրեթէ ժողովի երկու երրորդ մասը կը կազմէին, այդ պատճառաւ երեսփոխանական ընտրութիւնք կը կրէին ընդհանուր հանգամանք:

Քանի որ երեսփոխանական ընտրութիւնք ընդհանուր հանգամանք մ' ունէին, հետեւեալ կարելի էր սպասել, ինչպէս անհրաժեշտաբար կը լինի և րօպական երկիրներու մէջ, որ հայ հասարակութեան պատկանող ամեն դասերու մէջ յառաջ գար ընտրական ալայքար, ժողովրդական յուզում, իրարանցում, նոյն իսկ կոխա Սա. կայն երեսփոխանական ընտրութեանց առթիւ ոչ մի առանձին դէպք չպատահեցաւ, որ առ ժամանակ խռովէր, վրդովէր իրաց խաղաղ վիճակը: Անտարակոյս «Շնորհիւ վեհ. սուլթանին», երեսփոխանական ընտրութիւնք եղան և կատարուեցան աշխարհ խաղաղութեամբ, աշխարհ ը. ութեամբ որ կարծես թէ բացի «Արեւել» ի և տեղա. կան ուրիշ հայ լրագիրներ ընթերցողներէն, ուրիշ ո՛չ որ հայ հասարակութիւնէն իմացաւ, թէ ամբողջ մի ամսէ ի վեր «ընդհանուր Տաճկաստանի հայոց» ներկայացուցիչ համարող պատրիարք և վարչութիւնք ընտրական եր. կունքի մէջ էին: Ընտրութիւնք ուրեմն եղան ու վերջա. ցան բաց առարար կառավարութեան և սորա հայ. ըստրուկ պաշտօնեայնների մէջ կանխաւ եղած գաղտնի հա. մաճայնութեամբ, որուն կոյր գործիք եղած է Ազգեան պատրիարքը, հայ հասարակութիւնը որքան և ներկայ երես. փոխանական ընտրութեանց առթիւ երեցաւ կատարելա. պէս անտարբեր դէպ այդ ընտրական գործողութիւնները, այնուամենայնիւ՝ զիտողներու աչքին չվրայեցաւ մի յայտնի զիտաւորութիւն՝ որով կառաջնորդուէին մեր էֆէնտի ներք և ազանքը՝ ունենալով պատրիարքը իրենց գլուխը:

Յայտնի կերե էր որ հայ ժողովրդեան կարծեցաւ ա. րաջնորդները, որոնք տաճիկ պաշտօնեայններուն յատուկ կեղծիքը հազած են, ինչպէս իրենց վերարկուն, և այն. պէս լաւ սովորած են իրենց տէրերու առաջ խոնարհիլ մինչև գետին, քծնիլ նոցա ոտքերը լիղլու չափ, լողոր ընտրութեանց միջոցին կը ծառայէին նոյն իսկ գիտակ. ցաբար մի վերին քաղաքականութեան:

Կառավարութիւնը կարծելով որ հայոց ազգ. ժողովը, որքան ալ իր բարձր հսկողութեան տակ է, հետեւելով աւելի կամ նուազ ժողովրդական ազգային ուղղութեան՝ կարող է ազդել հայ ժողովրդի և արտաքին դիւանագի. տութեան վրայ, ուստի կը ձգտէր զայն այնպիսի տարրե. րու ձեռքի մէջ դնել, որոնք ընդունակ լինէին անպայման հպատակիլ իր կամքին և ամեն բան տնօրինէին ըստ իր բաղձանաց:

Կառավարութիւնը թէև ի վաղուց անտի միշտ հետե. ւած է այս քաղաքականութեան, սակայն և այնպէս վերջերս ժողովրդական հանգամանք կրող անհատներ մի կերպ յաջողելով մտնել ազգ. ժողովը, եթէ մի բան և ոչ էին կարող ընել, գոնէ իրենց կրկնողով ժողովոյ նստե. րուն «ազմիակի» բնաւորութիւն կտային. մի բան, որ ինչքան և ոչ չէին, բայց դարձեալ սուլթանի ջղերուն կը դաչէր և մեր ազգասէր պէյերն ու էֆէնտիները ձախող դիրքի մէջ կը գնէր: Խնդիրն ուրեմն այդ կարգի անձնա.

որութիւնները խաղառ հեռացնելու և երեսփոխանական անձնակազմը վրայ անպատճառ վսեմափայլ, ազնուափայլ և մեծապատիւ պարոնները, ազանները, էֆէնտիները և պէյերը բազմեցնելուն մէջն էր Կառավարութիւնը յաջողեցաւ: Ասկայն այդ յաջողութեան գաղտնիքը պէտք չէ միայն փնտռել անպատճառ ընտրութեանց միջոցին գործ գրուած խաղերու: մէջ, որոնք արդէն սովորական են, այլ նախ և առաջ նոյն իսկ սահմանադրութեան տրամադրութեան մէջ:

Յայտնի է որ ազգ. սահմանադրութիւնը գրուած պա. հուն՝ հիմնադրիւր աչքի առաջ ունէին ֆրանսական 48 թ. հանրապետութեան սահմանադրութիւնը, որոյ հիմնական սկզբունքները նոյնութեամբ ընդօրինակելով՝ կազմեցին հայոց ազգ. սահմանադրութեան օրէնսդրութիւնը: Պրան. սական օրէնսդրութիւնը կը տրամադրէ որ ամեն ընտրող՝ որ ձայն ախտի ունենայ երկրի խորհրդի մէջ պարտաւոր է որոշաւ տուրք վճարել: Արդ մեր սահմանադրութեան հիմնադրիւր, առանց թափանցելու այն յատուկ յետադէմ, հակաժողովրդային և հարուստ դասակարգի չափերու համար եղած դիտաւորութիւնը, որով չարժամ էր ֆրան. սական բուրժուազին (հարուստ դասակարգը) երկրի օրէնքագրութեան մէջ ընտրական գրամական պարտաւորիչ տուրք մտցուցած պահուն, ընդունելին դայն և մեր սահմանադրութեան մէջ, որ յայտնի է «ազգային տուրք»՝ անուամբ (եօթանասուն հինգ զր.)՝ Ազգային տուրքը երեսուն տարիէ հետէ կարելի չէ եղած զանձել գաւառներու մէջ հասկնալի պատճառներով: Բայց նոյն իսկ Պօլսոյ ազգայինները դերձ լինելով հանդերձ դինւորական տուրքէն, շատ չնչին մասնակցութիւն մը ունեցած են յարդ ազգային տուրք վճարման մէջ: Ազգ. խխանութիւնը հաղիւ շատ անձան մաս մը կարող է եղած կոր. զի այդ տուրքէն, այն ևս ոչ ուղղակի, այլ հարսանեկան, մկրտութեան և թաղման տոթիթները ներկայանալուն Մին չի. այժմ հետեւարար, երեսփոխանական ընտրութեանց միջոցին՝ անկարելի կը լինէր խտտութեամբ հետեւի գրա. մական օրինաց գործադրութեան և Պօլսոյ ազգայինք ձրխարար կուտային մի շարք երեսփոխաններ: Այս ան. դամ, սակայն, և յատկապէս այս անգամ, ազգ. վարչութիւնը առաջ բերաւ սահմանադրութեան տրամադրութիւնը որ հարուստներու օգտին միայն կը ծառայէ և նոր երեսփոխանական բախումը կատարեց հիմք բռնելով ընտրողին դրամական կարողութիւնը և իբր թէ անձնական արժանիքը, որ անարժանք և վատերու աչքին «մի և նոյն բանն է»: Այդպիսով չնորհիւ սահմանադրութեան այդ ձեռք առնուած տրամադրութեան, ազգ. ժողովոյ մուտքը արտօնելի եղաւ միայն հարուստ դասակարգին: Եւ սակաւաթիւ հայաբնակ թաղեր աւելի ներկայացուցիչներ տուին քան բազմահայ թաղեր: Բերան ամենը զերազանցեց, որ քսան և հինգ ընտրողի վրայ մի երեսփոխան է եկել, այնպէս որ ներկայ չըջանի ազգ. ժողովը ամեն ժամանակէն աւելի առատ է պաշտօնեայ էֆէնտիներով՝ վաճառական ազաններով և թեթիւ սոյիկ (զէվզէկ) «ինտելիգէնտներով» և իրաւամբ

ամեն ժամանակէ աւելի ալ պատկառելի... գրողների ծանրութեան տեսակէտից, բայց ոչ երեսփոխաններու մտաւոր ու բարոյական կարողութեանց տեսակէտից... Fi done ինչ պէտք կայ այդ կարողութեանց մէջ և աւելի որքան թիչ ունինք հայերս այդպիսիներ:

Երբէք ազգ. ժողովը այնքան չաք ու պատիւ չէ տրուած իր չորջը, որքան այժմեան ժողովը, և այսպիսի մի «պատկառելի» ժողով վարելու համար կարժէր որ Կուրեան էֆէնտի պէս մի բարձրատախճան պաշտօնեայ ատենապետութեան պատուոյն կոչուէր: Այսուհետեւ ուրեմն, երանի հայ ազգին, որ ամեն իրաւունք ունի յուսալու, թէ ներկայացուած խնդիրք արագ-արագ լուծում կտանան, որովհետեւ չկան և ընդգիմադիրներ և եղածներուն ալ ձայնը մարած է...

Այսու ամենայնիւ հայ ժողովուրդը՝ գաւառացի մեր եղբայրները չնորհիւ վերջին դէպքերու, չնորհիւ յեղափոխական արմատական պրօպագանդային՝ մտադիր չէ այլ ևս խարուելու կառավարական և զինակաւոր ազգա. սէրներու մեքենայութիւններէն, ոչ ալ որ և է անկաւ. իբ ունի ամեն բան խոտացեց, բայց խկապէս ոչինչ, կատարեալ ոչինչ չը տուող մեր յետադէմ՝ սահմանադրութիւնն ու բոլոր թմրկածայն գէվզէկային ժողովներէն:

Այդպէն ասոր պէտք է վերադրել այն անտարբերութիւնը, զոր նա յայտնի ցոյց տուաւ թէ՛ սահմանադրութեան տարեկարձի ատթիւ իր բացակայութեամբ և թէ՛ երեսփոխանական ընտրութեան տոթիւ: Այս վայրկեանիս ամենապարզ է որ գաւառացի տառապեալ ժողովուրդը խաղաւ կորուցած է (և այս շատ ուրախալի է) այն խա. բուսիկ և անբողբոյս յոյսն ու հաւատը, որ գրեթէ բոնի տարածել կուտային ժամանակին միամիտ «բանախօսներն ու բանաստեղծները»՝ դէպի պատրիարքն ու սահմանադրութիւնը: Այսօր մեր բոլոր ժողովները նորա աչքին կերկին, որպէս փառամոլներու և զէվզէկներու հաւա. քածոյ:

Մեր «ջնջերը» որոնք այժմ իրաւունք ունին բազմելու ազգ. ժողովոյ մէջ, ջնքով խնդակցութիւն յայտնեցին վերաբացման ատթիւ՝ ազգ. ժողովը վերակազմուած տեսնելուն համար, որ մի տարիէ ի վեր քայքայված վիճակի մէջ էր, և մէկը մինչև անգամ յախշտակութեամբ յայտաբարեց, թէ ազգ. ժողովը կազմող տարրերը ազգին ընտրեալացիներն են: Իհարկէ կեղծիք... Սակայն ոչ թէ միայն մենք, այլ ներկայ և անցելոյն փորձառութիւններն բոլորովին հակառակ կարծիքը կուտան ներկայ երեսփո. խաններու նկատմամբ: Բայց պահ մը ենթադրելով նոյն իսկ որ այդ մարմինը կազմուած լինի իրենց կոչումը, իրենց պարտականութիւնը լաւ ըմբռնած, համոզուած, աղ. նիւ, ժողովրդասէր, առանց յետին մտքերի, միմիայն ընդհանուր չափերով առաջնորդուող, զարգացած, բանիմաց ու խելացի տարրերէ՝ դարձեալ բացարձակապէս անկարող է իրապէս (de facto) ծառայելու և զոհացում տալու հայ ժողովրդեան անտեսական ու բարոյական պա. հանջներուն: Մինչև որ իսպառ չեն ջնջուած երկրին մէջ մի անգամ ի վաղուց արմատացած և հաստատու.

թիւն գտած յայտնի պայմաններ, որոշ սովորութիւններ, ներկայ հանրակեցութեան կարգն ու սարքը, (որոց գոյութեան ու յարատեւութեան անհրաժեշտ պէտք ունի օտմն . կառավարութեան ամբողջ շէնքն է այդ նոյն խակ իւր գոյութեան և մի անգամ ձեռք բերած դիրքի ազահովութեան համար), մինչև որ բոլորովին նոր միջոցաւ այն է ժողովրդային յեղափոխութեամբ, չեն փոխուած ներկայ հասարակական տնտեսական քայքայիչ, փնտաւար, մահացուցիչ պայմանները, որոց մէջ այսօր կը գտնուի հայ ժողովուրդը, ազգ . ժողովը, կըսենք, ենթադրելով որ օժտուած լինի ազգին ընտրելագոյն ոյժերով իր բոլոր սահմանադրական հանգամանքներով, ոչ մի իրական օգուտ չունենալէն ի դատ, կատարեալ ամբողջութեան, կատարեալ մեղեւորութեան դատապարտուած կը լինի թղթի վրայ կանխաւ մտածուած ու նշանակուած օրէքները ս'ըքան և իմաստուն, ս'ըքան և ժողովրդական և արդար լինին, ոչինչ են, մեծածառ են, հետեւաբար և սպարգիւն են, եթէ նոքա գտտապարտուած են միայն թղթի վրայ մնալու, այլ ևս ս'էր կը մնայ մեր սահմանադրութիւնը, որ թղթի վրան անգամ գէշ է գրուած:

(կը շարունակէ .)

ՎԵՐՁԻՆ ԼՈՒՐԵՐ .

Լ ու ր Ե ր Խ ա ր Ե ր Գ ի ց .

Խարբերից մեզ հաղորդում են, որ յուլիս եօթին Տէր սիմի քրդարնակ մի գիւղում կաշառուած թիւրգ մէկ աղա իր մօտ ճաշի է հրաւիրում և ձերբակալել տալիս պ . Եժմաւոնին՝ ուսուցիչ Արարիկիւրի աղգային վարժարաններին, Գ ա գ ի Կ Տ է վ է ճ ե ա ն ի ն՝ 18 տարեկան՝ աշակերտ Եժմաւոնի և երեք ուրիշ հայ ևս Պ . Եմաւոնը լինելով պարսկահայտակ, Խարբերիկ պարսկ. հիւպատոս Գրիգոր, բէկ Վարդանեանը կառավարութիւնից պահանջել է նրան, որ և յանձնվել է: Մանրամասնութիւնները «Հնչակի» օտաջի կայ համարում: Լուրեր են պատում, թէ այդ ձերբակալութեան վրէժն տանելու համար մէկ ուրիշ զիւղի քրդեր հրդեհել են ձերբակալող թիւրգ աղան տունն ու ագարակը:

Լ ու ր Ե ր Մ ու չ ի ց .

Մշոյ կառավարութիւն Համօյի հրամանաւ ու ծրագրով երկրի արևելեան, արևմտեան և հարաւային կողմերը (Զիւրէթ, Խասղիւղ, Վարդենիս) կը պահպանէ այժմ երեք վաշտ զօրքերով՝ հայերը բրդերէ չհարստահոր ունելու պատրուակաւ:

Մուշէն 3 քառորդ ժամ հեռու Զրիկ գիւղին հայ կին մը առևանգուած է Մշոյ քաղաքի թուրքերէն և աշմ քննութեան ենթարկեալ է ի Բաղէշ:

Խարց գիւղէն (Չուխոր) հայ մը սպանուել է քրդերէ:

Սեղուտ գիւղէն Կրանոս անուն անձը որ Կ . Պօլիս և Ռուսաստան յաճախակի ճամբորդութիւններ ըրած է, ձերբակալուած և Մշոյ կեդրոնական բանտը գրուած է իբրև յեղափոխական:

ՅՈՒՅԱԿ ԱՔՍՈՐՎԱԾՆԵՐԻ .

Հարկ ենք համարում հրատարակել հայ յեղափոխական շարժման մէջ մասնակցած լինելու ամբաստանութեամբ ձերբակալուած ինն հոգու ցուցակը, որոնք վերջերս բարձրագոյն հրամանով առանց դատաստանի, արքայութեան այլ և այլ տեղեր, Գրանք ուղարկուեցան իրենց արքայութեանը գիւղերով, գաղտնի կեցով, խիստ հսկողութեան տակ և չլթայակապ:

Ահա այդ ցուցակը . —

Պ ե ա Ր Ո Ս Մ ա Ր ի մ ե ա ն՝ արապիգօնցի, թարգման աւարտական հիւպատոսարանի, 33 տարեկան . արքայութեան Արիա . բերդարգելութիւն:

Գ Ր Ի Գ Ո Ր Գ Ր լ Ե Ճ Տ ե ա ն՝ տիւրիկցի, ուսանող իրաւաբանական համալսարանի Կ . Պօլսում, 23 տարեկան . արքայութեան Արիա . բերդարգելութիւն:

Ն ի Կ Ո Ղ Ո Ս Պ ա Լ ա լ ե ա ն՝ սերաստացի, սեղանաւոր (փօլիստնի), 34 տարեկան . արքայութեան Արիա . բերդարգելութիւն:

Մ ա Ր Գ ա Ր Մ ո մ ճ ե ա ն՝ սերաստացի, վաճառականական գրագիր, 34 տարեկան . արքայութեան Արիա . Երիւզիս:

Ս ա Ր Գ ի Ս Օ ք թ ո Ր ե ա ն՝ տիւրիկցի, արհեստաւոր հովանոց շինող, 32 տարեկան . արքայութեան Արիա . Երիւզիս:

Ա Ղ ա Ր Ի Կ՝ Բալուցի, ջութակահար, 21 տարեկան . արքայութեան Արիա . Երիւզիս:

Թ ո Ր Ո Ս Վ ա Ր մ ա լ ե ա ն՝ տիւրիկցի, Ֆէսնի, 37 տարեկան . արքայութեան Վօնես:

Ա Լ Ե ք ս ա ն՝ տիւրիկցի, արհեստաւոր . հիւսն, 32 տարեկան . արքայութեան Վօնես:

Ս ա Ր Գ ի Ս Հ ո վ ի ւ ե ա ն՝ տիւրիկցի, 16 տարեկան պատանի (Արքաւի աշակերտը) . արքայութեան Վօնես:

Կուսակցութեան Վանձարանում շնորհակալութեամբ ստացվել են հետեւեալ դումարները . —

Եգիպտոսի Հին քաղաքից Արեքի ձեռքով 144 ֆրանկն — Յունաստան, Ս . ք . ից Մասօնից 100 դրամիւ — Ամերիկայի Մ . Ն . Նիւ . Պօրա ք . ից անյայտից 5 դոլար — Բօլգ . Վ . ք . ից Մ . Է . ից 5 ֆր . — Ռուսաստանի . Բ . ք . Հայկազն Զինակրի միջոցով Արարատեանից 60 ռուբլի, Ռատրդից 10 ռբ . , Նոր Արձախից 47 ռբ . , Աղ . Սր . 25 ռբ . , „ Յորդահոս Ճորոխի ” հանգանակած՝ 18 ռբ . 56 կօպ . , Մ . Մ . ից երկու ռբ . , Հ . . . և գ . . . և այլից 30 ռբ . , Արամից 8 ռբ . , Ընձայի հանգանակած՝ 17 ռբ . 90 կօպ . , Ծերունի Արաքսի հանգանակած՝ 35 ռբ . — Ե . Ա . ք . ից օրիորդ Ք . ից քսան ֆրանկ:

Յօդուաներ, թղթակցութիւններ, տեղեկութիւններ և դրամ ուղարկել հետեւեալ հասցէով .

Paris (France) . — M. Beniard. Poste restante .

Լօնցօն . Հայկական աղատ տպարան .